ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար տեսանկարահանման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/54» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» դեկտեմբերի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Էլլադա Արզաքանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի պատասխանատու,

Լիլիթ Հովհաննիսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 32-րդ կետի 1-ին ենթակետի զ. պարբերությամբ նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի /զ/ պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը և ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող անձնաժողովը որոշեց՝

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և

-1-ին, 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին,

2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),

3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Կարեն Մելքոնյան

Էլլադա Արզաքանյան

Լիլիթ Հովհաննիսյան

Քարտուղար՝

Արուս Խաչատրյան